ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
(XIX դ. վերջին քառորդ—XX դ. սկիզբ)

ԱՐՄԵՆ ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

XIX դ. վերջին քառորդին — XX դ. սկզբին Վանն Արևմտյան Հայաստանի համանուն նահանգի կենտրոնն էր և Հայաստանի հայաշատ քաղաքներից մեկը։ Այն գտնվում էր Վանա լճից արևելք 0,8—7,5 կմ հեռավորության վրա (արևմտյան ու արևելյան ծայրերը)։ Նշված ժամանակահատվածում Վան քաղաքը բաժանված էր երկու հիմնական մասի. առաջինը՝ քաղաքի արևմտյան մասը, կոչվում էր Քաղաքամեջ և զբաղեցնում Վանի միջնադարյան բերդի տարածքը (մոտ 1 քառ. կմ)։ Երկրորդն այսպես կոչված Այգեստանն էր, որը նախկին մի քանի գյուղերի մի ամբողջություն էր և ուներ մոտ 22 քառ. կմ տարածություն։

Օսմանյան կայսրությունում կիրառվում էր բնակչության թվաքանակը որոշելու երկու մեթոդ։ Առաջինը, ինչպես և այժմ՝ մարդահամարն էր։ Արդի մարդահամարից այն տարբերվում էր նրանով, որ ի կատար էր ածվում տարվա տարբեր ժամանակներում և հաճախ՝ միայն մեկ անձնավորության կողմից։ Որքանով էլ թերի է այսպիսի մեթոդը, այնուամենայնիվ, դրա միջոցով հավաքած թվերն ամենահավաստին են։ Մյուսը գնահատման մեթոդն է, երբ հետազոտողը հարցուփորձերով կամ աչքաչափով որոշում է որևէ բնակավայրի բնակիչների թիվը կամ նման տեղեկություններ է ստանում միջնորդ անձից։ Այսպիսի տվյալները, որպես կանոն, լինում են մոտավոր, իսկ հաճախ էլ, պարզապես սխալ։ Ներքոշարադրյալ հաշվարկներում մենք առաջնությունը տալիս ենք մարդահամարների տվյալներին։

Կա մի խնդիր ևս. բնակիչների վերաբերյալ եղած թվերը մեծ մասամբ տրված են ըստ ընտանիքների (տուն, ծուխ, երդ, տնտեսություն և այլն) քանակի։ Հետևաբար, բնակչության քանակի որոշումը կախված է ընտանիքի միջին մեծությունից։

Վան քաղաքի ընդհանուր բնակչության թվաքանակը որոշելուց առաջ առանձին-առանձին քննենք տարբեր ազգությունների վերաբերյալ թվական տվյալները։

XIX դ. վերջին քառորդին — XX դ. սկզբին Վանում բնակվում էին հայեր, թուրքեր, գնչուներ, քրդեր, պարսիկներ, եվրոպացի և ամերիկացի զանազան պաշտոնյաներ ու միսիոներներ։ Քաղաքի բնակչության ամենահին և միակ բնիկ տարրը հայերն էին, որոնց թվաքանակի վերաբերյալ պահպանվել են բավական մանրամասն տեղեկություններ։ Նշված ժամանակահատվածում հայ բնակչության քանակին վերաբերող առաջին տեղեկությունը ստանում ենք 1872 թ. փետրվարին քաղաքում անցկացված մարդահամարից, ըստ որի Վանն ուներ 8007 արական հայ բնակչություն[1]։ Համաձայն 1880 թ. Վասպուրականի վիճակագրության, քաղաքի հայ բնակչության 52,1%-ը արական սեռի էր, իսկ 47,9%-ը՝ իգական[2]։ Ենթադրելով, որ այսպիսի հարաբերություն գոյություն ուներ նաև 1872 թ., ամբողջ հայ բնակչության համար կունենանք 15369 անձ։

Ըստ Ա. Երիցյանի հաղորդած տեղեկությունների, 1876 թ. հայ բնակչությունը 18460 անձ էր[3]։ Հետևաբար՝ 1872—1876 թթ. ժամանակահատվածում

---

1 «Արարատ», Վաղարշապատ, 1873, էջ 193։

2 ՀՍՍՀ գրականության և արվեստի թանգարան, Գ. Սրվանձայանի ֆոնդ, գ. 1—20, թ. 2. (այսուհետև՝ ԳԱԹ, ՍՖ)։ Այստեղ և հետագայում հաշվարկները մերն են — Ա. Մ.։

3 А. Д. Ерицов, Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном управлении России («Материалы для описания Ирана и Азиятской Турции», т. 2, Тифлис, 1883, с. 126).

հայ բնակչության աճի տարեկան տեմպերն էին 4,6 %։ Այսպիսի բարձր տեմպերը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էին հայերի ներհոսքով։ 1878 թ. հայերի թվաքանակն արդեն հասել էր 18752-ի[4]։ Սակայն հաջորդ տարիներին նկատվում է հայ բնակչության թվաքանակի որոշ նվազում՝ 17399 անձ՝ ըստ Վասպուրականի 1880 թ. վիճակագրության[5]։ Այս նվազումը, հավանաբար, պետք է վերագրել 1878 թ., երբ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայերի մի մասն արտագաղթել էր։ Այս թվականների համար ունենք նաև գնահատման մեթոդով կատարված հաշվարկներ։ Այսպես, ըստ Վանում գործող եվրոպական քարոզիչների՝ քաղաքը 1878 թ. ուներ 4500 ընտանիք հայ բնակչություն[6], իսկ ըստ Մ. Միրախորյանի՝ 1885 թ. այնտեղ կար 3000 հայ ընտանիք[7]։ Ինչպես կարելի է նկատել, երկու թվերն էլ կլորացված են, հետևաբար և մոտավոր, ուստի նրանցով անիմաստ է ստույգ հաշվարկներ կատարել։

Ժամանակագրական առումով հաջորդը Վ. Քինեի տվյալներն են. 1890 թ.՝ 13500 հայ[8]։ Գրականության մեջ բազմիցս խոսվել է Վ. Քինեի տվյալների անճշտության մասին։ Այդ հանգամանքը հաստատվում է նաև Վան քաղաքի բնակչության օրինակով։ Վ. Քինեն ոչ միայն սխալ տեղեկություններ է տալիս ինչպես հայ, այնպես էլ թուրք և մնացյալ բնակչության թվաքանակի վերաբերյալ, այլև ճիշտ չի ներկայացնում հայերի և թուրքերի տոկոսային հարաբերությունը։ Այն դեպքում, երբ բոլոր հետազոտողներն անխտիր նշում են, որ հայ բնակչությունը քանակապես միշտ ավել էր թուրք բնակչությունից, Վ. Քինեն հակառակ պատկերն է ներկայացնում՝ 13500 հայ և 16000 թուրք[9]։ Նույն 1890 թ. համար ունենք Հ. Լինչի «20000 քրիստոնյա» տվյալը[10]։ Սակայն, ինչպես նա ինքն է նշում՝ «Վան քաղաքի ու կենտրոնական գավառի թվերը հիմնված են իմ իսկ (Հ. Լինչի —Ա. Մ.) տեղեկությունների վրա»[11]։ Ինչպես տեսնում ենք, այս թիվը նույնպես գնահատական է և բավական հեռու է հավաստի լինելուց։

Այնուհետև գալիս են Վ. Մաևսկու տվյալները (2887 հայ ընտանիք), որոնք, ինչպես և այլ աղբյուրների մասին եղած տեղեկությունները, «հավաքված են բացարձակ վստահություն ներշնչող անձի կողմից»[12]։ Ընտանիքի անդամների միջին քանակը որոշելու համար դիմենք 1914 թ. Վանի առաջնորդարանի կողմից անցկացված մարդահամարի տվյալներին, ըստ որոնց Վանում 1914 թ. բնակվում էր 4132 հայ ընտանիք կամ 22470 անձ[13]։ Հետևաբար հայ ընտանիքի միջին մեծությունը XX դ. սկզբին 5,4 մարդ էր։ Վ. Մաևսկու նշած թիվը բազմապատկելով 5,4-ով, կստանանք 15590 հայ՝ 1899 թ. համար։

Նախորդ թվերի հետ համեմատությունը ցույց է տալիս, որ 1880—1899 թթ. հայ բնակչության թվաքանակը որոշակիորեն նվազել է։ Այս փաստը, իհարկե, պետք է վերագրել 1896 թ. արյունալի դեպքերին, երբ Վանի նահանգի հայությունը կորցրեց 20000 մարդ սպանված և այդքան էլ փախստական[14]։ Ինքը՝ քաղաքը, միայն 1896-ի հունիսի 3—10-ը կորուստներ ունեցավ՝ 546 սպան-

[4] ԳԱԲ, ՍՅ, գ. I—20, թ. 2։

[5] Նույն տեղում։

[6] «Փորձ», Թիֆլիս, 1879, № 6, էջ 128։

[7] Մ. Կ. Միրախորյան, Նկարագրական ուղեորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, մ. Բ., Կ. Պոլիս, 1885, էջ 141—142։

[8] V. Cuinet, La Turquied'Asie, t. 2, Paris, 1892, p. 691.

[9] Նույն տեղում։

[10] X. Лынч, Армения. Путевые очерки и этюды, т. 2, Тифлис, 1910, с. 531.

[11] Նույն տեղում։

[12] В. Т. Маевский, Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов, Тифлис, 1904. Приложение «Статистические данные о населении...», с. 5 (այսուհետև՝ МВСОВБВ, СДН).

[13] «Աշխատանք», Վան, 1914, № 35 (181), էջ 3։

[14] Հ. Թրամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 375—377, «Ванский вилайет», М., 1910, с. 4.

ված, 92 վախից մեռած և 208 առևանգված[15]։ Մոտավորապես նույնպիսի տեղեկություն է հաղորդում նաև Վ. Մաևսկին. 500 մարդ սպանված հոնիս ամսին[16]։ Ընդամենը, ըստ Ա-Դոյի բերած թվերի՝ 846 հոգու կորուստ։ Հայ բնակչությունը կորուստներ ունեցավ նաև հետագա ամիսներին՝ սպանված ու գաղթած։ Ճիշտ չեն Վ. Մաևսկու «Վանի վիլայեթ» գրքի թվերը։ Հեղինակը գրում է, որ ըստ քաղաքի վարչական իշխանությունների միաձայն վկայության, «Վանում բնակչության 2/3-ը բաժին է ընկնում հայերին։ Այդ պատճառով, Վանի բնակչության թվաքանակն ընդունելով թեկուզ 30000 մարդ, թվում է, թե ճիշտ է ենթադրել, որ այս թվի մեջ պետք է հաշվել 20—25 հազար հայ, իսկ մնացածը վերագրել թուրքերի հաշվին։ (Թուրք պաշտոնյաները ենթադրում են, որ Վան քաղաքի 5400 տան դեպքում բնակիչների թիվը կարող է հասնել նույնիսկ 40000 մարդու (մի տան վրա 8 շոմչ հաշվելով)»[17]։ Ինչպես տեսնում ենք, Վ. Մաևսկու հաշվարկները հիմնված են լոկ ենթադրությունների վրա։

Հայ բնակչությունը զոհեր տվեց նաև 1896—1897 թթ. ձմռանը, երբ տիֆի համաճարակից մեռավ ավելի քան 1500 մարդ[18]։

Հայերից շատերը գաղթեցին։ Ինչպես հայտնի է, 1896 թ. հունիսյան կռիվներից հետո 700 հոգի հեռացան քաղաքից և փորձեցին անցնել Պարսկաստան, սակայն ճանապարհին կոտորվեցին[19] Թուրքական բարբարոսությունները շարունակվեցին 1896 թ. ամռան ընթացքում։ Այս ամենի հետևանքով Վանի հայության քանակը 1899 թ. նվազել էր, կազմելով 15590 անձ։

Հետագա մի քանի տարիների ընթացքում հայ բնակչության թվաքանակը չի աճում։ Դրան, ամենայն հավանականությամբ, խանգարում էին արտագաղթն ու պանդխտությունը[20]։ Ըստ Մերուկի տեղեկության, 1904 թ. սկզբին (կամ 1903 թ.) Վանում կար 15000 հայ[21]։ Դրությունը հիմնականում նույնն էր նաև 1904—1908 թթ.։ Ժողովրդագրական իրավիճակը փոխվեց 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո, երբ սկսվեց տարագիր հայերի ներգաղթը իրենց ծննդավայրերը։ Այս ժամանակին է վերաբերում Վանի հայ բնակչության կտրուկ աճը. 1904 թ. 15000-ի դիմաց 1909 թ. այնտեղ բնակվում էր 20000 հայ (4000 ընտանիք)[22]։ Հետագա տարիներին հայ բնակչությունն անշեղորեն աճում էր և 1914 թ. հասավ 22470-ի[23]։ Այս թիվը վերցված է 1914 թ. ապրիլի մարդահամարի տվյալներից։ Այն իրականացվել է ամբողջ Արևմտյան Հայաստանով մեկ և ամբողջական պատկերացում է տալիս հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ։ Մարդահամարը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Վան քաղաքի հայ բնակչության մասին. այսպես, Վանում 1914 թ. կար 4132 ընտանիք, 2755 տուն (շինություն), 22470 բնակիչ, որից 11586 արական և 10884 իգական սեռի, այդ թվում 3851 արհեստավոր, 1171 առևտրական, 729 օրավարձու բանվոր, 139 պաշտոնյա, 529 ուսուցիչ, 26 հոգևորական, 47 դինվոր, 4450 աշակերտ, 78 ուսանող, 12287 գրագետ (հայ բնակչության 54,7%-ը)։ Բացի այս, պանդուխտ էր 2197 մարդ (հիմնականում Թուրքիայի տարբեր քաղաքներում և Ռուսաստանում)[24]։

Հաջորդ երկու տեղեկությունները վերաբերում են 1915 թ.։ Առաջինը բե-

---

15 Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 316, 359։

16 В. Т. Маевский. Ванский вилайет (военно-статистическое описание), Тифлис, 1901, с. 180.

17 Նույն տեղում, էջ 101։

18 Նույն տեղում, էջ 105։

19. «Հայ ժողովրդի պատմություն (1801—1978 թթ.)», Երևան, 1979, էջ 264։

20 Ըստ Մերուկի՝ «այժմ առնվազն 10 տուն գաղթում են տարվան ընթացքում» («Մուրճ», Թիֆլիս, 1904, № 9, էջ 24)։

21 Նույն տեղում, էջ 19, 24։

22 Ա-Դո, նշվ. աշխ., էջ 17։

23 «Աշխատանք», 1914, № 35 (181), էջ 3։

24 Նույն տեղում, № 36(182) էջ 5; Р. Бекгульянц (Северякин), По Турецкой Армении, Ростов-на-Дону, 1914, с. 13.

րում է Յոհ. Լեփսիուսը՝ 30000 անձ[25], երկրորդը՝ 34000, Վանի առաջնորդարանի տվյալներն են[26]։ Կարծում ենք, որ այս տվյալները չեն վերաբերում Վան քաղաքի բուն բնակիչներին։ Այլապես տարեկան միջին աճը ստացվում է 28,7% (30000-ի դեպքում) կամ 40,8% (34000-ի դեպքում), որը, իհարկե, անհեթեթություն է։ Այս թվերը, ամենայն հավանականությամբ, պարզապես սխալ են, թեև չի բացառվում, որ Վանում 1915-ին այդքան հայ բնակչություն լիներ՝ առաջին աշխարհամարտի արհավիրքների հետևանքով տեղի ունեցած գյուղական բնակչության ներհոսքի շնորհիվ։ Ինչևէ, աշխարհամարտի նախօրյակին վերաբերող վերջնական ճշգրիտ թիվը մնում է 22470-ը՝ 1914 թ. ապրիլի համար։

Հայտնի է, որ 1915 թ. հուլիսի սկզբին հայ բնակչությունը արտագաղթեց քաղաքից և ապաստան գտավ Արևելյան Հայաստանում։ Սակայն ռուսական զորքերի կողմից Վանը վերագրավվելուց հետո հայերի մի ինչին մասը վերադարձավ հայրենի վայրերը. այսպես, 1915 թ. դեկտեմբերին Այգեստանում կար 263 հայ ընտանիք (1370 անձ), իսկ Քաղաքամեջում՝ 90 ընտանիք (360 անձ)[27], ընդամենը՝ 353 ընտանիք կամ 1730 անձ։ Հայ ընտանիքի միջին մեծությունը 4,9 մարդու էր հավասար 1914-ի 5,4-ի դիմաց։ Համաձայն մի այլ մարդահամարի, 1916 թ. առ 1-ը հունվարի Վանում հայերի ընդհանուր թիվն էր 2063[28]։ Հայ բնակչությունը երկրորդ անգամ իր հայրենի հողից բաժանվեց 1918 թ. մարտին—ապրիլի սկզբին, իսկ ապրիլի 7-ին թուրքական զորքերը վերջնականապես գրավեցին ավերված քաղաքը։

Վանի թուրք բնակչության թվաքանակի մասին ավելի սակավ տեղեկություններ են պահպանվել։ Ըստ Ա. Երիցյանի, 1876 թ. քաղաքում բնակվում էր 12050 թուրք[29]։ Այնուհետև, Գ. Պաուլիի հաղորդմամբ, 1878—1879 թթ. այստեղ կար 2500 թուրք ընտանիք կամ 12500 անձ[30]։ Հեղինակը թուրք ընտանիքի միջին մեծությունը հաշվում է 5 մարդ։

Այս երկու տեղեկություններն էլ ճիշտ չեն հետևյալ պատճառներով։ Նախ, ըստ Վանի առաջնորդարանի կատարած մանրամասն վիճակագրության, թուրք բնակչության քանակը 1877—1878 թթ. 8450 անձ էր[31]։ Երկրորդ, քաղաքի թուրք բնակչությունը գտնվում էր արտոնյալ և ապահով վիճակում, չկար բնական աճը կասեցնող ոչ մի խոչընդոտ, հետևաբար թուրքերի թվաքանակը գնալով պիտի ավելանար։ Մինչդեռ 1899 թ. համար կա Վ. Մաևսկու ճշգրիտ վիճակագրությունը՝ 2012 թուրք ընտանիք[32]։ Թեև չկան վիճակագրական հավաստի տվյալներ, սակայն հակված ենք թուրք ընտանիքի միջին մեծությունը XX դ. սկզբի համար համարել 5,4 մարդ՝ ժողովրդագրական տեսակետից առանձնապես տարբերություն չտեսնելով Վան քաղաքի հայ և թուրք ընտանիքների կազմի միջև։ Ընտանիքների քանակը բազմապատկելով այս ցուցանիշով՝ 1899 թ. թուրք բնակչության համար կստանանք 10865 անձ։

Նույնպես սխալ է գնահատման մեթոդով Մ. Միրախորյանի հաշվարկած թիվը՝ 2500 թուրք ընտանիք 1885 թ.[33]։

Հ. Լինչը թուրքերի թվաքանակը 1890 թ. հաշվում է 10000 անձ[34]։ Հեղինակը հետաքրքիր փաստ է հաղորդում Վանի թուրք բնակչության վերաբերյալ։ «...ներկայումս,—գրում է նա,—Վանում և նրա շրջակայքում ոչինչ չի մնում թուրքական որևէ բնակավայրի (նախկինում) գոյություն ունենալու մա-

---

25 Joh. Lepsius. Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei. Potsdam, 1916, S. 84.

26 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1977, № 3, էջ 112։

27 «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1915, № 3, էջ 14։

28 Նույն տեղում, 1916, № 10, էջ 14։

29 Ա. Դ. Երիցով, նշվ. աշխ., էջ 126։

30 «Փորձ», 1879, № 6, էջ 128։

31 ԳԱՓ, ՍՅ, գ. I—20, թ. 1։

32 МВСОВБВ, СДН,, с. 5:

33 Մ. Կ. Միրախորյան, նշվ., աշխ., էջ 141—142։

34 Х. Линч, նշվ. աշխ., էջ 531։

սին։ Քաղաքի մահմեդական բնակչությունից 6 ընտանիք կամ տոհմ, ամեն մեկը մոտավոր հաշվով 50 մարդ, կարող են համարվել թուրքական ծագում ունեցող։ Սրանցից ամենանշանավորներն են. Թիմուր—օղլի տոհմը, ապնուհետև՝ Ջամուզչի—օղլին կամ գոմշարածի որդիները և Թոփչի—օղլին՝ հրետանավորի որդիներ»[35]։

Թուրք բնակչության թվաքանակը շատ մոտավոր է ներկայացված Վ. Մաևսկու աշխատության առաջին (1901 թ.) հրատարակության մեջ։ Հեղինակը քաղաքի 30000 բնակչությունից 20—25 հազարը համարում է հայ, իսկ մնացածը, այսինքն՝ 5—10 հազարը՝ թուրք[36]։

XX դ. սկզբի տարիներին թուրք բնակչությունը համարյա չէր աճել. ըստ Մերուկի՝ 11000 անձ 1903-ին կամ 1904 թ. սկզբին[37]։ Այստեղ պատճառը կամ վատթար առողջապահական պայմաններն էին կամ էլ պարզապես Մերուկի թվերի անճշտությունն է։ Հետաքրքիր է, որ 1899—1904 թթ. չէր աճել նաև հայ բնակչությունը։

Անշուշտ, սխալ պետք է համարել Ա.-Դոյի 18000 թիվը՝ 1909 թ. համար[38], այլապես տարեկան միջին աճը 1899—1909 թթ. կազմած պիտի լիներ 4,9%, որը միայն բնական աճի շնորհիվ հնարավոր չէր, իսկ այդ տարիներին թուրք բնակչության ներգաղթի մասին փաստեր չկան։ Ավելի հավանական է Ռ. Բեկդուլյանցի տեղեկությունը՝ 1914 թ. մոտ 15 հազար մահմեդական, որի մեծագույն մասը թուրքեր էին[39]։ Տարեկան միջին աճն այս դեպքում կլինի՝ 2,1% (1899—1914 թթ.)։ Սրանից բխում է, որ ճիշտ չեն նաև Աշ. Հարությունյանի և Յոհ. Լեփսիուսի բերած տեղեկությունները. համապատասխանաբար 21000[40] և 20000[41] թուրք՝ 1915 թ. համար։ 1914 թ. համար հաշվելով նույնիսկ 18000 թուրք, 1914—1915 թթ. համար կստանանք 15,4% (21000-ի դեպքում) կամ 10,5% (20000-ի դեպքում) աճ, որը, իհարկե, անհնար է։ 15000 մահմեդականների մեջ, ինչպես ստորև կտեսնենք, պետք է հաշվել նաև 216 քուրդ, ուստի թուրքերի թվաքանակը լինում է 14784։

1915 թ. մայիսից մինչև 1918 թ. ապրիլը Վանում թուրք բնակչություն չկար։ Այն սկսեց վերադառնալ միայն թուրքական զորքերի կողմից քաղաքը հետ գրավվելուց հետո։

Հետադարձ հաշվարկով կարելի է որոշել նաև Վանի թուրք բնակչության թվաքանակը 1876 թ. համար։ Ինչպես տեսանք՝ 1899-ին քաղաքում կար 10865 թուրք, իսկ 1878-ին՝ 8450, հետևաբար տարեկան միջին աճը 1878—1899 թթ. եղել է 1,2%։ Համարելով, որ նույքան է եղել թուրքերի աճը նաև 1876—1878 թթ., 1876 թ. համար կստանանք մոտ 8250 անձ։

Վանի երրորդ հիմնական ազգաբնակչությունը գնչուներն էին։ Նրանց թվաքանակի մասին եղած սակավաթիվ տվյալներն են. ըստ Ա. Երիցյանի՝ 120 անձ 1876 թ.[42], ըստ Մ. Փորթուգալյանի՝ 400 անձ 1890 թ.[43], ըստ Վ. Մաևսկու՝ 54 ընտանիք 1899 թ.[44], ըստ Մերուկի՝ 30 ընտանիք 1903—1904 թթ.[45]։

Ա. Երիցյանի հիշատակած թիվը կասկածելի չէ, քանի որ ինքն անձամբ

---

35 Նույն տեղում, էջ 106։

36 В. Т. Маевский, Ванский вилайет, с. 101.

37 «Մուրճ», 1904, № 9, էջ 19։

38 Ա.-Դ ո, նշվ. աշխ., էջ 17։ Ըստ հեղինակի ծանոթագրության «այս թվերը կազմված են հայերի ձեռքով վերջին տարիներում, որոնք համենայն դեպս ավելի ճիշտ են, քան մինչև այժմ եղածները» (նույն տեղում)։

39 Р. Бекгульянц, նշվ. աշխ., էջ 13։

40 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1977, № 3, էջ 112։

41 Joh. Lepsius, նշվ. աշխ., էջ 84։

42 А. Д. Ерицов, նշվ. աշխ., էջ 126։

43 Մ. Ա., Թյուրքիայի հայերն և իրենց դրացիներ, Մարսել, 1890, էջ 16։

44 МВСОВБВ, СДН, с. 5.

45 «Մուրճ», 1904, № 9, էջ 23։

խնամքով հավաքել է թվական տվյալները։ Կասկածելի է Մ. Փորթուգալյանի տված 400-ը, քանի որ տարեկան միջին աճը 1876—1890 թթ. ստացվում է 9%։ Այսպիսի աճ հնարավոր էր միայն ներգաղթի շնորհիվ։ Այդպիսի մի տեղեկություն գտնում ենք Մերուկի նույն հոդվածում։ Այնտեղ հեղինակը նշում է, որ գնչուները «վերջին տարիներումս հողեր և կալվածներ ձեռք բերին և բնակություն հաստատեցին Քաղաքամիջի պարիսպներից դուրս, դեպ արևելք Այգեստանի արևմտյան ծայր կազմող «Փշով փողոց» կոչված փողոցի մեջ»[46]։ Գնչու բնակչության հետագա նվազումը (54 ընտանիք կամ բազմապատկած 4,3-ով՝ 232 անձ)[47] պետք է բացատրել միայն 1896—1897 թթ. ձմռան համաճարակով։ Թեև փաստեր չկան այս մասին, սակայն բնական է, որ նրանք էլ վարակված լինեին։ 1903—1904 թթ. համար Մերուկի տված 30 ընտանիք թիվը վկայում է, որ գնչուների մեջ նոր համաճարակներ են եղել կամ էլ նրանց մի մասը արտագաղթել է այլ վայրեր։ Բացառված չէ նաև այս թվի թերի լինելը։

Եթե գնչուների տարեկան միջին բնական աճը ընդունենք 1%, ապա 1914 թ. գնչուների թվաքանակը պիտի դարձած լիներ մոտ 270 անձ (1899-ին՝ 232 անձ էր)։

Վանում բնակվում էին նաև քրդեր ու պարսիկներ։ Քրդերի մասին Մերուկը գրում է. «Վանում կան 40 տան չափ քյուրդեր, որոնք զանազան գյուղերից գաղթելով քաղաք, իրանց բնակություն հաստատել են քաղաքի զանազան մասերում և մանավանդ Շամիրամ կոչված թյուրքական թաղում։ Սրանցից շատերը արդեն ժամանակի ընթացքում....թյուրքացել են»[48]։ Կարծում ենք, որ 40 ընտանիք քրդերը 1914-ին այդքան էլ մնացել էին՝ նորեկների և ուծացածների թվաքանակի թերևս հավասար լինելու հետևանքով։ Անձերի վերածած կլինի 216 քուրդ (մի ընտանիքում 5,4 մարդ հաշվելով)։

Բացի հիշյալ ազգություններից, Վանում, ըստ Վ. Մաևսկու, «մշտապես բնակվում էին մոտ 40—50 մարդ պարսիկ առևտրականներ...։ Եվրոպացիները միայն մի քանի ընտանիք էին, այդ թվում՝ 2—3 ընտանիք ամերիկացի միսիոներներ, ռուսական հյուպատոսը, անգլիական հյուպատոսը և դոմինիկյան ուխտի 2—3 կաթոլիկ վանականներ»[49]։ Ըստ Հ. Լինչի՝ Վանի անգլիական հյուպատոսարանում մշտապես բնակվում էր երեք բրիտանահպատակ[50]։ Սակայն քանի որ այս ազգությունները քաղաքի մշտական բնակիչ չէին համարվում, ուստի մենք ևս նրանց դուրս ենք թողնում վիճակագրությունից։

Ըստ Վ. Քինեի տվյալների՝ Վան քաղաքում բնակվում էր 500 հրեա[51]։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Հ. Լինչը. «Վիտալ Քինեն..., որի վիճակագրական տվյալները, ըստ իս, հազվադեպ են վստահություն ներշնչում, բնակչության թվում ներառում է 500 հրեա՝ Արտաշիսյան Տիգրանի կողմից այստեղ բերված գաղութի մի մնացորդ։ Ես տարբեր մարդկանցից տեղեկացել եմ այդ մասին, բայց բոլորը պատասխանել են, որ քաղաքում ու գավառում ոչ մի հրեա էլ չկա, բայց որ Բաշկալեում ապրում է հրեա 25 ընտանիք»[52]։ Նույն կարծիքին է նաև Վ. Մաևսկին, որը գրում է. «Ըստ Վ. Քինեի տվյալների, Վան քաղաքում ու մոտակա գավառներում հաշվվում է 1000-ի չափ հրեա։ Դա, անկասկած, ճիշտ

---

46 Նույն տեղում։

47 Գնչու ընտանիքի միջին մեծությունը տեսականորեն հայ ընտանիքներից նվազ պետք է լիներ, քանի որ գնչուները նախ՝ թափառակյաց էին (իսկ թափառակյաց ազգաբնակչությունը սովորաբար ավելի փոքր ընտանիքներով է ապրում), և երկրորդ՝ ավելի վատթար առողջապահական պայմաններում էին գտնվում, քան հայերը կամ թուրքերը, որի հետևանքով մահացությունը գնչու ընտանիքներում ավելի բարձր էր։ 4,3 թիվը ստացել ենք Մոկսի գնչուների ընտանիքի մեծությունը որոշելիս։

48 «Մուրճ», 1904, № 9, էջ 23։

49 МЫСОВЕВ. СДН, с. 3.

50 Х. Линч, նշվ. աշխ., էջ 104։

51 V. Cuinet, նշվ. աշխ., էջ 654, 691։

52 Х. Линч, նշվ. աշխ., էջ 101։

չէ։ Ո՛չ Վան քաղաքում, ո՛չ էլ նրա շրջակայքում, համենայնդեպս, 50 վերստ շառավղով, ոչ մի հրեա չկա»[53]։

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Վան քաղաքի բնակչության տեղաշարժերը 1876—1914 թթ. ժամանակահատվածում.

Ազգություններ	1876 թ.		1899 թ.		1914 թ.		Աճը 1876—1914 թթ.	
	Թիվը	%	Թիվը	%	Թիվը	%	Թվով	%-ով
Հայեր	18460	68,8	15590	58,4	22470	59,5	4010	22
Թուրքեր	8250	30,8	10865	40,7	14784	39,2	6534	79
Գնչուներ	120	0,4	232	0,9	270	0,7	150	125
Քուրդեր	—	—	—	—	216	0,6	—	—
Ընդամենը	26830	100	26687	100	37740	100	10910	41

Ինչպես երևում է աղյուսակից, Վանի հայ բնակչությունը 1876 թ. կազմել է ընդհանուր բնակչության բացարձակ մեծամասնությունը (68,8%)։ Հետագայում, թուրքական իշխանությունների հայահալած քաղաքականության հետևանքով, նրա տեսակարար կշիռը խիստ նվազել է՝ առաջին աշխարհամարտի նախօրյակին հասնելով 59,5%-ի։ Թուրք բնակչությունը, ընդհակառակը, աճել է և՛ թվաքանակով, և՛ տոկոսային հարաբերությամբ, 1876—1914 թթ. ժամանակահատվածում ավելանալով 79%-ով, մինչդեռ հայ բնակչությունը նույն թվականներին ավելացել է ընդամենը 22%-ով։ Ակնհայտ է, որ հայ բնակչության ժողովրդագրական պրոցեսները բոլորովին այլ ընթացք կունենային, եթե հայ ժողովուրդը Արևմտյան Հայաստանի տարածքում քիչ թե շատ բնականոն զարգացում ունենար։

НАСЕЛЕНИЕ ГОРОДА ВАНА

(Последняя четверть XIX—начало XX веков)

АРМЕН МИКАЕЛЯН

Резюме

На протяжении указанного периода времени г. Ван населяли армяне, турки и пр. народности, среди которых основным по численности являлись автохтоны—армяне. Так, в 1876 г. в городе проживало 18460 армян, 8250 турок и 120 цыган, в 1899 г.—15590 армян, 10865 турок и 232 цыгана, в 1914 г.—22470 армян, 14784 турка, 270 цыган и 216 курдов. В результате проводимой турецкими властями политики геноцида по отношению к армянскому населению Османской империи доля армян среди населения г. Вана снизилась с 68,8% до 59,5%, тем не менее составляя абсолютное большинство накануне первой мировой войны. Проживавшие в городе цыгане и курды были немногочисленны, составляя в 1914 г. всего 1,3% населения. Ошибочной является точка зрения В. Кюине о проживании в г. Ване евреев.

53 В. Т. Маевский, Ванский вилайет, с. 99—100.